ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3964-Ա « 13 » օգոստոսի 2026թ.

ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշումը (Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի մայիսի 21-ի N 714-Ն որոշման խմբագրությամբ), Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի N 604-Ն որոշման 2-րդ կետը, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի 2026 թվականի օգոստոսի 11-ի հ. Ն/52864-26 զեկուցագիրը.

1. Հաստատել «Երևանի Ստեփան Շահումյանի անվան հ.1 հիմնական դպրոց», «Երևանի Հակոբ Կարապենցի անվան հ.6 հիմնական դպրոց», «Երևանի հ.31 հիմնական դպրոց», «Երևանի Հակոբ Պարոնյանի անվան հ.59 հիմնական դպրոց», «Երևանի Ալ.Մյասնիկյանի անվան հ.66 հիմնական դպրոց», «Երևանի Ա.Դ.Սախարովի անվան հ.69 հիմնական դպրոց», «Երևանի Յոհաննես Լեփսիուսի անվան հ.88 հիմնական դպրոց», «Երևանի հ.110 հիմնական դպրոց», «Երևանի Կոստան Զարյանի անվան հ.117 հիմնական դպրոց», «Երևանի Պարույր Սևակի անվան հ.123 հիմնական դպրոց», «Երևանի Գայի (Հայկ Բժշկյանց) անվան հ.129 հիմնական դպրոց», «Երևանի Հ.Օշականի անվան հ.172 հիմնական դպրոց», «Երևանի հ.186 հիմնական դպրոց», «Երևանի Աշոտ Նավասարդյանի անվան հ.196 հիմնական դպրոց», «Երևանի Է.Թելմանի անվան հ.13 հիմնական դպրոց», «Երևանի Ջ.Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոց», «Երևանի Ալ.Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոց», «Երևանի Ա.Արմենակյանի անվան հ.26 հիմնական դպրոց», «Երևանի Աղասի Խանջյանի անվան հ.53 հիմնական դպրոց», «Երևանի Վ.Տերյանի անվան հ.60 հիմնական դպրոց», «Երևանի Վ.Վաղարշյանի անվան հ.80 հիմնական դպրոց», «Երևանի հ.91 հիմնական դպրոց», «Երևանի հ.98 հիմնական դպրոց», «Երևանի հ.140 հիմնական դպրոց», «Երևանի Մ.Մեծարենցի անվան հ.146 հիմնական դպրոց», «Երևանի Ռուբեն Սևակի անվան հ.151 հիմնական դպրոց», «Երևանի հ.167 հիմնական դպրոց», «Երևանի հ.99 միջնակարգ դպրոց», «Երևանի Ա.Մանուկյանի անվան հ.93 միջնակարգ դպրոց», «Երևանի հ.175 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների

կանոնադրությունները՝ նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1, 2, 3, 4 ,5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30 հավելվածների:

2. Հանձնարարել սույն որոշման առաջին կետում նշված պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին՝ ապահովել կազմակերպության կանոնադրության գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումը և պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246